

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ՊՈՒԽՍԻ ՀԱՅԵՎԱՐԸ

ԲԱՌԳԻՐՔ ՊՈԼՍԱԿԱՆ ՌԱՄԿՕՐԷՆԻ

Առխաստսիրեց Թեոդիկ, 1899-1905, Իսկիւսար, Եռանասոր,
ձեռագիր — ինքնագիր, անհիպ, 2500 էջ

Թէոդիկի այս կարեւոր աշխատասիրութիւնը 1905 թուականի Յուլիսին արժանացած է Յովսէփ Իզմիրեանց Գրական Յանձնաժողովի առաջին կարգի մրցանակին, սակայն այսօր անտիպ պահուած է Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքում: Իր «Ամէնուն Տարեցոյց»ի 1922 թուականի հատարում հեղինակն այն նշել է իր հրատարակելի գործերի չարքում (անսկանաթերթի ներսի կողմում):

Ինչպէս յայտնի է, Յովսէփ Իզմիրեանց կտակի նպատակն է եղել քաջալերել հայ «գրականութիւնը, դպրութիւնը և բանասիրութիւնը»: Թէոդիկը և ուրիշներ մասնակցել են 16րդ մրցանակարաշխութեան, որից առաջ Յանձնաժողովը նախորդ տարիներին համեմատութեամբ մի քանի փոփոխութիւններ է կատարել:

Մինչև 1904, մրցանակարաշխութեան մասնակցել ցանկացողներն իրենք են ընտրել մշակելիք նիւթը, և մրցանակարաշխութիւնը տեղի է ունեցել ամէն տարի: Արդ, Գրական Յանձնաժողովը 1904 թուականի Յունիսի 27ի պաշտօնական ծանուցումով ինքն է որոշել 1905 թուականի մրցանակարաշխութեան նիւթը. «Արդի հայերէնի բառարանի համար նախապատրաստական նիւթերու հաւաքածոյ կազմել, իւրաքանչիւր բառին հանդէպ բառարանական սովորական տեղեկութիւններով, մանաւանդ ծագման և կիրառութեան մասին բացատրութիւններով: Վիճեցեալի Առձեռն բառարանին վերջին ապագրութիւնն իրրե հիմ ընդունելով ... և քերականական տեղեկութիւններն իրրե գնահատելի առաւելութիւններ ընդունելով» («Արեւել» օրաթերթ, Պուլիս, 27 Յունիս 1904): Սակայն նկատի առնելով առաջարկուած նիւթի ընդարձակութիւնը՝ Յանձնաժողովն այն բաժանել է երեք կէտի, որոնց երկրորդն է եղել «Արեւմտեան գաղափարաբաներու բառեր և սճեր»: Թէոդիկի աշխատանքը, ինչպէս նաև ուրիշներ, վերաբերում են այս կէտին:

Իրրե երկրորդ փոփոխութիւն, ի տարբերութիւն նախորդ մրցանակարաշխութիւնների, Յանձնաժողովը մէկ տարուայ ժամկէտի փոխարէն սահմանել է երկու տարի ժամանակ, որպէսզի աշխատանքները առանց հապճեպի և խնամքով պատրաստուեն ու ներկայացուեն:

Նախորդ տարիների համեմատութեամբ մի առաւելութիւն ևս նախկինում ներկայացուած աշխատանքները գրախօսելու համար յանձնուել են մէկ քննիչի, իսկ 16րդ մրցանակարաշխութեան ներկայացուած 18 աշխատանքները քննուել են հինգ հոգուց բաղկացած քննական յանձ-

նաժողովի կողմից, որի իւրաքանչիւր անգամ զրեթէ ամբողջութեամբ ծանօթացել է աշխատանքներին: Վերջում սրանք քննարկուել են յանձնախմբի նիստերում:

Յովսէփ Իզմիրեանց Գրական Յանձնաժողովի 16րդ մրցանակաբաշխութիւնը տեղի է ունեցել 1905 թուականի Յուլիսի 7ին, նախագահութեամբ Օրմանեան պատրիարքի, եկեղեցականների և անուանի մտաւորականների ներկայութեամբ, Ղալաթիոյ խորհրդարանում: Միթարեան գիտնական Հայրենից ներկայ են եղել Գորբրիէլ Մէնէվիչեանը, Գրիգորիս Գալէմբեարեանը և Յովհաննէս Թորոսեանը: Յանձնաժողովի ատենապետն է եղել Գորբրիէլ Նորատուենկեանը, ատենադպիրը՝ Մկրեան աւագ քահանան:

Քննիչ յանձնախմբի անդամներն են եղել Բարկէն Կիւլէսէրեանը, Թովմաս Թէրզեանը, Ռեթէոս Պէրպէրեանը, Հրանտ Ասատուրը և Խաչիկ Նորատուենկեանը: Ներկայացուած 18 աշխատանքների մասին կազմուած մանրամասն տեղեկագիրը կարդացել է Հրանտ Ասատուրը: Դրանում խելացիօրէն պատճառարանուած են մրցանակների յատկացման մասնագիտական հիմքերը: Մրցանակի կտակարար Յանձնաժողովը լրիւ համաձայն է եղել քննիչ յանձնախմբի տեղեկագրի հետ:

Ներկայացուած 18 աշխատանքներից երկուսը միեմուել են, որովհետեւ չեն վերաբերել Յանձնաժողովի սկզբից եւեթ սահմանած նիւթի երեք կէտերից մէկին: Մնացած աշխատանքները համարուել են զնաճատելի և արժէքաւոր գործեր, մեծ մասամբ արեւմտահայ բարբառների ուսումնասիրութիւններ և բառարաններ: Որպէս այդպիսին, առաջին կարգի մրցանակին (35 ոսկի) արժանացել են՝

1. Տիգրան Զիթճեանի (Զիթճունի) «Վանայ գաւառաբարբառը»,
2. Թէոդիկ Լապճինճեանի «Պալիսի հայեկարը»:

Երկրորդ կարգի մրցանակին (15 ոսկի) արժանացել են՝

1. Օ. Բարաղամեանի «Վանայ համայնապատկերը»,
2. Կարապետ Գաբրիկեանի «Սերաստիոյ գաւառալեզուն»:

Դրամով խրախուսուել է նաեւ Սիմոն Գաբաժմեանի յայտնի բառարանը, որի ապագրութիւնն այն ժամանակ սկսուել էր:

Քննիչ յանձնախմբի տեղեկագիրն ամբողջութեամբ ապագրուած է «Արեւելք» օրաթերթի 1905 թուականի 5920-5922 համարներում:

Մատաւորականները յոյս են ունեցել մինչեւ տեղեկագրի ընթերցումը, որ Իզմիրեանց 16րդ մրցանակաբաշխութեան առաջին կարգի մրցանակին արժանացած աշխատանքներն այս անգամ կ'արժանանան նաեւ ապագրութեան: Սակայն նրանք յուսախար են եղել, որովհետեւ Իզմիրեանց կտակում աշխատանքների ապագրութեան մասին յատուկ կէտ չի եղել: Արամ Անտոնեանը «Արեւելք» օրաթերթի խմբագրականում առաջարկել է, որ մրցանակի ամբողջ գումարը յատկացուէր (120 ոսկի), այս անգամ զոնէ, արժանաւորագոյն աշխատանքի հրատարակութեան, քանի որ 35 ոսկի գումարը հեռու էր, նոյնիսկ այն ժամանակ, մէկ զրքի ապագրութեան ծախսերը հոգալուց: Սակայն Գրական Յանձնաժողովի անդամները չէին կարող խախտել կտակի պայմանները: Այդպիսով՝ առաջնութիւն չաճած ո՛չ մի աշխատանք ժամանակին լոյս չի տեսել:

Տիգրան Զիթճեանի և Օ. Բարաղամեանի աշխատանքների բախտը մեզ յայտնի չէ: Կարապետ Գաբրիկեանի «Սերաստիոյ գաւառալեզուն» աշխատութիւնը, «աւելիալ և ճոխացեալ 1914 ի Սերաստիա», 1952ին

երուսողեմում լոյս է տեսել Ամերիկայի Համասերաստահայ վերաշինաց Միութեան կողմից, հեղինակի հոգեշնորհ սրբու ներածականով: Իսկ Թէոդիկի նոյնքան արժէքաւոր աշխատանքը մնացել է անտիպ: Երեւելով մի քանի պատճառներից՝ կարծում ենք, որ աւելի քան ժամանակն է այն ևս հրատարակելու:

Պոլսում չկողմուցեց և չհրատարակուեց արգի հայերէնի այն բառարանը, որին նիւթ պէտք է հայթայթէին, դռնէ մասամբ, Իզմիրեանց մրցանակին 1905 ին ներկայացուած բառարանները, չնայած քննիչ յանձնախմբի տեղեկագրում արտայայտուած խոստումներին: Այստեղ մտադիր չենք վերլուծելու դրա պատճառները և կարելիութեան հնարաւորութիւնները:

Մեր օրերում Հայկ. ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրաշեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտում պատրաստւում է արգի հայերէնի քառահատոր բառարանը, որի առաջին հատորը լոյս է տեսել մի քանի տարի առաջ: Ծրագրուած է հետագայում լոյս ընծայել հայոց լեզուի ակադեմիական բառարան 16 հատորով: Կարծում ենք, որ հայերէն ուրիշ բարբառների բառարանների հետ, որոնք ապագրուած են, բառարանագրական այդ հակայական աշխատանքներին կարող է իր լուծման բերել նաև Թէոդիկի «Պոլսի հայեւորը»:

Սակայն անկաս վերայիչեալ հանգամանքից, Թէոդիկի աշխատանքն ինքնին արժանի է ապագրութեան, որպէս Պոլսի 1900ական տարիների հայ գաղութի բարբառի և բանահիւսական դանձերի հաւաքածոյ. ինչպէս կը տեսնենք ստորև:

Ոմանք համոզուած են, որ Հայաստանից դուրս կատարուած հայ բարբառագիտական աշխատանքները վստահելի չեն, քանի որ գրեթէ միշտ դրանք բարբառների գիտական ուսումնասիրութեան մէթոդներով կատարուած չեն մասնադէպ լեզուաբանների կողմից: Այս թերահաւատ վերաբերմունքի մէջ որոշ ճշմարտութիւն կայ: Բայց երբ խօսքը օրէն բարբառի բառարանի մասին է, այդ թերահաւատութիւնը, կարծում ենք, պէտք է մեղմանայ, իսկ Թէոդիկի պէս մտրդու գործի նկատմամբ բաւարոյն պէտք է վերանայ: Բարբառային բառարանների պարագային արտասահմանեան հեղինակի միակ խոցելի կողմն այն կը լինի, որ նա բարբառագիտական ուղղագրութեամբ գրանցած չի լինի մայրենի բարբառի հնչիւնները: Արդ, Պոլսի բարբառի հնչիւնաբանութիւնը յայտնի է Հրաշեայ Աճառեանի համապատասխան ուսումնասիրութիւններից: Բացի այդ, գիտենք որ, հայերէն մի քանի բարբառների, օրինակ՝ Բէսաբի կամ Ղարաբաղի բարբառների համեմատութեամբ Պոլսի բարբառի հնչիւնները գրաբարի մասնաւոր արեւելահայ արտասանութեան տեսակէտից «աղաւղտուած» չեն, և դրանց գրանցման համար անհրաժեշտ չէր գիտական տառադարձութիւն: Թէոդիկի բառարանում կարեւորը հայերէն բառերի և դարձուածքների բարբառային կամ «աւմակական» բաղմագան նշանակութիւնների լիակատար գրանցումն է:

Դարձեալ հակառակ ոմանց, մենք մեծ համարում ունենք Իզմիրեանց 16րդ մրցանակի քննիչ յանձնախմբի գիտակցութեան վրայ: համոզուած ենք, որ նա անաշտառութեամբ է պսակել իսկապէս արժէքաւոր աշխատանքներ, ինչպիսին է, միւսների հետ, Թէոդիկի «Պոլսի հայեւորը»: Արդէն տեսանք, որ քննիչ յանձնախումբը կողմուած է հղել ժամանակի յայտնի բանասէրներից և մտաւորականներից, որոնք ար-

գիտականներից շատերին չեն զիջում իրենց հայաց լեզուի գիտելիքներով, հայեցի մատուր պատրաստութեամբ և հրատարակած գործերով: Ուստի հաւատացած ենք, որ նրանք միանգամայն ձեռնհաս էին քրննարկուած աշխատանքներն ըստ արժանին գնահատելու և մրցանակ յատկացնելու: Համոզուած ենք նաեւ, որ աշխատանքների քննարկումն անցել է միանգամայն առողջ գիտական պայմաններում, առանց կողմնապահութեան: Հենց այդ կանխելու համար քննիչ յանձնախմբի բոլոր անդամները ծանօթացել են աշխատանքներին և քննարկել նիստերում, ինչպէս ասուած է տեղեկագրում. այդ ընդգծել է նաեւ ժամանակի մատուցը: Ուստի այս նկատառումներից ելնելով, թէկուզ առանց ծանօթանալու թէսդիկի աշխատանքին, կարող ենք ասել, որ արժէքաւոր գործ է, քանի որ արժանացել է իզմիրեանց մրցանակին, այն էլ առաջին կարգի:

Վերոյիշեալ երկու հանգամանքների կողքին չառ կարեւոր է հետեւել:

Ինչպէս տեսանք, քննիչ յանձնախմբի հինգ անդամներն էլ պոստեցիներ են հղել. ուստի նրանք միանգամայն ունակ էին ճիշդ գնահատելու Թէսդիկի «Պոլսի հայեւարը»: Տեղեկագրում նշուած է, որ քննիչ յանձնախմբի անդամները կարող էին սխալուել Պոլսի բարբառին չմերթնանալ՝ Ղարաբաղի կամ Վանի բարբառին մերթնանալ աշխատանքները գնահատելիս. սակայն ինչ վերաբերում է իրենց մայրենի բարբառին, նրանք նրբօրէն նկատել են տուել, որ դժուար թէ սխալուէին: Թէսդիկի աշխատանքի մասին տեղեկագրում չենք գտնում ոչ մի դիտողութիւն: Այնտեղ ասուած է.

«Ընդարձակօրէն կը ներկայացնէ կ. Պոլսոյ հայ գաղութին գաւառաբարբառը գրեթէ իւր ամէն ձևերուն մէջ՝ բոռ, ասացումք . . .» և այլն. և «Բառերու զանազան առումներն յատուկ ու ճշտաւէր պրպտումով մանրամասնուած են և յաճախակի օրինակներ կը ծառայեն լուսարանելու բառերու և սճերու իմաստները: Այս բառարանը կրնայ նկատուել նաեւ բառարան մը առանձին ի գրաւորն, վասնզի առանձին բառերու և ասութեանց դիմաց իբրեւ բացատրութիւն կամ համանիշ գործածուած են գրաւոր և երբեմն մինչև իսկ գրաւոր ընտիր բառեր և սճեր, ինչպէս Հ. Ե. Հիւրմուզեանի աշխարհարարէ ի գրաւոր բառարանը, բայց աշխարհիկ բառերու տեսակէտով ճիշտացնել քան զնա» («Արեւիկ» օրաթերթ, 1905, թ. 5921, էջ 1):

Թէսդիկը կարող էր արդեօք Պոլսի բարբառի բառարան պատրաստել:

Բանարկութեան և աքսորի հետեանքով չարաբաստիկ սպանդից փրկուած Թէսդիկը յայտնի է մանաւանդ իր «Ալեկուն Տարեցոյց»ներով, «Յուշարձան Ապրիլ 11ի» (Ապրիլ 1915ի հիդդեցական և մաւաւրական 761 զոհերու), «Զուլումը եւ մեր սրբերը», «Պարզաւ Թրքահայ հոգեւորականութեան եւ իր հօտին, ալեկուն 1915 տարին» գործերով, որոնք հրատարակուած են: Նրա «Պոլսի հայեւարը» աշխատութեան հրատարակութեամբ յայտնի կը դառնայ բառարանագիր և բառահաւաք Թէսդիկը: Սակայն դրանով հեղինակից աւելի յայտնի կը դառնան Պոլսի բարբառի բառամթերքի և Պոլսահայութեան բանահիւսական ցարդ անձամբ մնացած գտններ:

Վաճան Թէֆէկեանը Թէսդիկին սրակել է իբրեւ «Աշխատող, հայե-

րէն գիրն ու լեզուն սիրող» (Արտագլ Վարդուպէս Սիւրճեան, «Տարե» տարեցոյց, Հալէպ, 1929, էջ 275): Թէոդիկը մայրենի լեզուն իսկապէս չառ պիտի սիրէր, որպէսզի հօթը տարի աքնէր իր պստանայ բարբառի բառարանի վրայ:

Լեւոն Էստօնեանը, որ նոյնպէս լաւ է ճանաչել Թէոդիկին, նրա մասին գրել է. «Թէոդիկ, Տարեգրքի աշխատութեամբ կ'անուամ՝ գրագէտի տպերախառն տպարէզը լքելով, օգտապաշտ եղաւ բանաստեղծութեամբ, միշտ մնալով ժողովրդական ստորանը, անկօնեքով, ռամիկ ու գրարար տառի իւններով իւրայայտուէլ» (նոյն տեղում, էջ 276): Թէոդիկի աղբիւրը եղել է իր պստանայ մայրենի բարբառը, որին, ինչպէս վկայում են նրա բառարանը և այս տպերը, նա քաջածանօթ է եղել:

Արտագլ Սիւրճեանը նոյնպէս շեշտել է Թէոդիկի բանաստեղծութիւնը. «Իր մէջ գրողը կար և բանաստեղծ ... Բանաստեղծ և բառաստեղծ մը» (նոյն տեղում, էջ 277):

Որքան էլ վկայութիւններ բերենք ժամանակակիցներից Թէոդիկի մասին, բայց էլ պիտի հաստատեն Արտագլ Սիւրճեանին նրա նամակի հետեւեղ տպերի ճշգրտութիւնը. «Իմ սէրս գրչին է ... Աղօթէ, Հայր Աւրբո, որ հոն ալ տրուի ինձ նոյն եռանդը՝ անձնական նախասիրութեանս նուիրուելու, և կհանքիս մնացեալ քանի մը տարիներուն մէջ քիչ չառ ազգիս օգտակար ըլլալու նորէն» (նոյն տեղում, էջ 280): Թէոդիկը Փարիզում կ'աթաւանար վախճանուել է գրչի ձեռքին, աշխատանքի պահին:

Այսպիսով՝ Թէոդիկն այն մարդն էր, որ իբրեւ «Աշխատող, հայերէն գիրն ու լեզուն սիրող», իբրեւ բանաստեղծ և բառաստեղծ, ի վիճակի էր «Պոլիսի հայեւորը» կազմելու:

Մեր մեծագոյն բարբառագէտը մեծամաստակ Հրաչեայ Աճառեանն է: Հայերէնի ուրիշ բարբառների շարքին նա մի քանի անգամ ուսումնասիրել է Պոլսի բարբառը, նրա բառերից ընդգրկել է իր «Թուրքերէնէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ» (1902 թ.) և «Հայերէն գաղաղական բառարան» (1913) գործերի մէջ: Նրա այս հրատարակում գործերի կողքին Թէոդիկի բառարանը արեւաքաղաքի կը լինէր, եթէ գրանց համեմատութեամբ բարբառագիտական որեւէ նախնական չունենար, կամ եթէ Աճառեանը օգտագործած լինէր այն:

Աճառեանի նշուած աշխատութիւնների, ինչպէս նաև Պոլսի բարբառի նրա ուսումնասիրութեան ընթերցումը մեզ բերեց այն համոզման, որ նա երբեք չի տեսել Թէոդիկի «Պոլիսի հայեւորը»: Չէր էլ կարող, որովհետեւ այս աշխատանքը մինչև Երուսաղէմի պատրիարքարանը փոխադրուելը պահւում է եղել Պոլսի պատրիարքարանում. իսկ Աճառեանը 1896ին անվերապարձ մեկնել է Պոլսից գէպի Փարիզ՝ ուսանելու, այնուհետև Հայաստան և այլ երկիրներ:

Միւս կազմից՝ եթէ Աճառեանը Պոլսից դուրս կազմած լինէր այդ քաղաքի ռամկօրէնի բառարանը, կարծում ենք, որ Թէոդիկի պէս բանիմաց պոլսեցու՝ Պոլսում կազմած նոյնպիսի բառարանն աւելի լրիւ և աւելի ստոյգ պիտի լինէր: Աճառեանը նոյնպէս պոլսեցի էր. բայց նա իր բարբառից բաժանուել էր երիտասարդ հասակում: Բացի այդ, Հայաստանում և այլուր հայերէն բազմաթիւ բարբառներ ուսումնասիրելով՝ որոշ չափով պիտի ընկնէր գրանց բառերի ազդեցութեան տակ:

Այս հանգամանքները նկատի առնելով և աչքի առաջ ունենալով

Աճառեանի վերոյիշեալ աշխատանքները և Թէոդիկի «Պոլիսի հայեմարը», կարծում ենք, որ ճիշդ չէր լինի Թէոդիկի աշխատանքը, այսինքն՝ Պոլիսի դարասկզբի հայ գաղութի ժողովրդական լեզուի ամբողջական բառարանը համեմատել Աճառեանի «Թուրքերէնէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուի մէջ» և «Հայերէն գաւառական բառարան» աշխատութիւնների հետ՝ ցոյց տալու համար մէկի կամ միւսի առաւելութիւնը։ Աճառեանի առաջին բառարանի հետ համեմատել ճիշդ չէր լինի, որովհետեւ դա միայն Թուրքերէնէ փոխառեալ բառերի բացատրութիւնն է տալիս, իսկ Թէոդիկի բառարանում հայերէն բառեր են ընդգրկուած հիմնականում։ Աճառեանի «Հայերէն գաւառական բառարան»ի հետ էլ չենք կարող համեմատել ամբողջապէս, որովհետեւ նեղիկովը սրանում տեղ է յատկացրել նաև հայերէն ուրիշ բարբառների բառերին. ուստի կարծում ենք, որ նեղիկովը Պոլսի բարբառի բառերի մի մասը գիտակցաբար մի կողմ պիտի թողնէր կամ պիտի նշէր բացատրութեամբ պոլսահայ բառերի միայն հիմնական իմաստները կամ առումները։ Եթէ առարկուի, որ մենք սխալուած ենք, թէ Աճառեանը չէր կարող գիտակցաբար բառեր դուրս թողնել Պոլսի բարբառից, ապա այն ժամանակ առաւել ևս յստակ պիտի երևայ Թէոդիկի բառարանի ճոխութիւնը։ Աճառեանի բառարանի համեմատութեամբ։ Այսպէս թէ այնպէս, Թէոդիկի բառարանի անհամեմատ ճոխութիւնը Աճառեանի բառարանի համեմատութեամբ բացատրելի է նրանով, որ Թէոդիկի բառարանը միայն Պոլսի բարբառի բառարանն է, միայն մէկ բարբառի. հետևաբար պէտք է աւելի հարուստ լինէր բառերով և դարձուածքներով, ինչպիսին որ է իրականում։ Ուստի կարելի է անվերապահօրէն ասել, որ Աճառեանի «Հայերէն գաւառական բառարան»ի համեմատութեամբ Թէոդիկի «Պոլիսի հայեմարը» բովանդակում է շատ ու շատ նորութիւններ։ Բաղդատութիւնը թողնում ենք թերահաւաններին. այդ նպատակով ստորև Թէոդիկի բառարանից տպագրուելու են մի քանի էջեր առանց յատուկ ընտրութեան։

Հայ բարբառադէտները երբեմն յայտնաբերում են թերութիւններ Հ. Աճառեանի բարբառագիտական աշխատանքներում։ Այդ թերութիւնները մասամբ պատճառարանում են նրանով, որ Աճառեանը արեւմտահայ լինելով՝ լուս և յստակ չի տարբերակել արեւելահայ բարբառների ննչիւնական տարբերութիւնները։ Թէոդիկի բառարանի և Աճառեանի պոլսահայ բարբառի ուսումնասիրութիւնները, ինչպէս նաև նրա «Հայերէն գաւառական բառարան»ի պոլսահայ բառերի արտասանութեան գրանցումը և բառերի բացատրութիւնները համեմատելով՝ կարելի է ստուգել նրա և Թէոդիկի աշխատանքի ճշգրտութիւնը, պոլսահայ բառերի և ոճերի ժողովրդական արտասանութեան հարադատ գրանցման աստիճանը և բացատրութիւնների տարբերութիւնները։ Բերենք մի քանի օրինակ։

Հ. Աճառեանը «Հայերէն գաւառական բառարան»ում առաւ - փուխաւ արտայայտութիւնը բացատրել է «Պլ. խաբելով դրամը գողցող», իսկ Թէոդիկը՝ «Դրամաշորթ»։ Պոլսեցիները չեն վարանի յայտարարելու, թէ Թէոդիկն է ճիշդ բացատրել։

Նոյն բառարանում Աճառեանը նշում է, որ «առաջն տանել» դարձուածքը գործածական է Երևանի, Ղարաբաղի և Պոլսի բարբառներում. Թէոդիկի բառարանում դարձուածքի առաջին բառը «առաջքը»ն է։

Առնելիք բառայօգուածում Աճառեանը գրել է, թէ բառի սովորական ձևն է առնելիբուր, այսինքն՝ ա յօդակապով, որ բառը գրականին է մօտեցնում. իսկ թէոգիկի բառարանում գտնում ենք միայն առնելիբուր, ինչպէս Աճառեանն էլ նշել է առնելիբուր բառայօգուածում: Թէոգիկը ա յօդակապի մասին խօսելիս գրել է. «Ժողովուրդը ա-ով բարդութիւնները քիչ կը բանեցնէ, աւելի յարած է առանց յօդակապի բարդութեանց, ինչպէս սիբսմառուք, պակկերհան» և այլն:

Աճառեանը գրանցել է աւելոր անցունել, թէոգիկը՝ ասելս անցունել, վերջինիս բառարանում բնաւ չենք գտնում աւել գրական արտասանութիւնը. ասելս բառը բացատրել է «ասելն բառին ուսմկօրէնը»:

Նոյնպէս Աճառեանի բառարանում տեսնում ենք (Պոլսահայ բարբառում) Ասուծոյ գրաբարեան-գրական հոլովաձևը, իսկ թէոգիկի բառարանում միշտ Ասծոյ է:

Ինչպէս նկատելի է, Աճառեանի «Հայերէն գաւառական բառարան»ում բառերի հոլովական ձևերը մօտենում են գրական լեզուի ձևերին: Դրա պատճառը թերեւս այն է, որ, ինչպէս ասուած է բառարանի առաջարանում, հեղինակը բարբառային բառերը մեծ մասամբ քաղել է ապագիր գրականութիւնից (էջ 17): Մինչդեռ այս բառարանի հրատարակութիւնից առաջ լայն տեսած «Հայ բարբառագիտութիւն. Ուրուագիծ և դասակարգութիւն հայ բարբառների» աշխատութեան մէջ (1911), էջ 254, նա գրել է. «Պոլսոյ ... բարբառով գրուած անթիւ բնագիրները (թերթեր, վէպեր, առակներ, առածներ, ժողովրդական երգեր, գաւառական գրաւածքներ և կատակերգութիւններ) առ հասարակ պէտք եղած գիտական ճշդութիւնը չունին»:

Հր. Աճառեանի «Հայերէն գաւառական բառարան»ում կան բառեր և դարձուածքներ, որոնք, ըստ նրա, յատուկ են միայն Պոլսի բարբառին, որոնք սակայն չկան թէոգիկի բառարանում: Դրանք կա՛մ իրօք պակասում են թէոգիկի բառարանում (բայց կասկածում ենք), կա՛մ բուն «աւմկօրէն» բառեր ու դարձուածքներ չեն, այլ գործածուած են եղել այն ապագիր գրականութեան մէջ, որից Աճառեանը քաղել է իր բառարանի համար:

1914 թուականի Յունուարի 18ին Անթուան Մեյէին ուղղած մի նամակում Հր. Աճառեանն իր «Հայերէն գաւառական բառարան»ի մասին գրել է հետեւեալ տողերը, որ թարգմանում ենք ֆրանսերէնից. «Չեզ յայտնի է, որ հայերէն բարբառների մի բառարան ունէի, որ արժանացաւ Քանանեան մրցանակին (2000 ֆր.): Կնոջս ընդօրինակած և իմ չվերանայած ձեռագիրը Լազարեան ճեմարանում էր: Ճեմարանի անօրէն այդ ապուշ կոստանեանը առանց ինձ տեղեկացնելու ապագրել է բառարանը, և մի գեղեցիկ օր այն ստացայ բոլոր սխալներով, որոնք կարող են սպրդած լինել չվերանայուած ձեռագրի և չսրբագրուած փորձնական մամուլների մէջ»:

Ինչպիսի գնահատական էլ արուի Աճառեանի և թէոգիկի բառարաններին, այս երկու գործերը լրացնում են միմեանց, բայց վերջինիս գործն անհամեմատ աւելի ճոխ է որպէս պոլսահայ բարբառի բառարան:

Թէոգիկի բառարանի բովանդակութիւնը, կառուցուածքը և հեղինակի աշխատանքային ոճը լաւագոյնս բացայայտուած են առաջարանում, որ ապագրւում է ստորեւ: Ստուգուածը ցոյց է տալիս, որ «բովանդակութեան» բոլոր նիւթերը գտնում ենք բառարանում: Այդ բա-

լորը դրի տանելով և մանրամասն բացատրելով՝ Թէսդիկը հայաց լեզուի շատ գանձեր է փրկել կերստից: Սակայն այդ բոլորը ապագաութեան յանձնելով միայն կտրելի է անվերադարձ կորստից ազատուած համարել, մանաւանդ երբ սրտամարմնք յիշում ենք այն ցուալի իրականութիւնը, որ պայտահայութիւնը թրքախօս դառնալու հարկադրանքի տակ է ապրում այսօր:

Թէսդիկը քաջ դիտակցել է, որ միայն այս և նման բռնարաններն լրաց հիմնուելով՝ աշխարհարարի բռնարան կազմել չի կտրելի: «Մի՞նչ օղելի պիտի ըլլար տեղւոյն, — գրել է նա առաջարկում, — փորձ փորձել այս տեսակ բազմաբնի մը տաղանդներովը կանգնելու արդար աշխարհարարի մը չէնք լման. միայն թէ կրնանք համարձակիլ յայտնել, որ անոր ապագայ յօրինուածքը բաւական բան մը կարող է փոխ տանել, ճարտարապետութիւնը անթերի ու քիչ մըն ալ — եթէ կ'ուզէք — հարազատ սեպուելու համար»:

Թէսդիկի «Պոլիսի հայկաբը» բարերախտարար կորուստի մասնւրում չէ, և զա՛նչորհիւ երեստողէմի Հայ Պատրիարքարանի: Ուստի իզմիրեանց Գրական Մրցանակի քննիչ յանձնախմբի խիստ դրական կարծիքից, ինչպէս նաեւ մեր համազմունքից բացի, այն այսօր էլ կարող են դնահատել բարբառապէտ և բռնարանագիր մասնագէտները. այս իսկ նկատառումով «Սիւն» հանդէսի խմբագրութիւնը նպատակաշարժար է գտնում ապագրել հեղինակի յառաջարանը և բուն բռնարանից մի քանի էջ տաանց յատուկ բնարութեան:

Ս. Յակոբեանց վանքի արխիւներում պահւում են իզմիրեանց մրցանակներին ներկայացուած հայագիտական այլ աշխատութիւնների ձեռագիրներ, որոնց ցուցակը ապագրուած է Սիմոն Սիմոնեանի «Սիւլուս» հանդէսի 1959 թուականի Սեպտեմբերի 26ի համարում, էջ 6: Իյս ցուցակում է նաեւ, բնականաբար, Թէսդիկի բռնարանը: Համակարծիք ենք, որ բարբառագիտական աշխատանքներից ոմանք շատ արժէքաւոր են և արժանի ապագրութեան: «Ժամանակին, — գրել է Սիմոն Սիմոնեանը, — մեծանուն և անմոռանալի լեզուաբան Հ. Աճառեան պահանջած և ստացած է ասոնցմէ կտրեսրներուն նմանահանութիւնը»: Սակայն սրա՞նց՝ տեսած չէ:


Երեստողիմ

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ¹

Ժողովրդական բառեր իրենց բաղժաթիւ տառններով և հոմանիշներով. Մասեղաբանութիւններ, բաղդատութիւններ՝ գրոց, գաւառական, արեւել. և եւրոպ. լեզուներու հետ. Աստղաւածք, յատկաբանութիւններ, փոխարեութիւններ. Օտարամուտ բառեր. Աղաւաղումներ իրենց սեղգումներով. Փերականութիւն (խոնարհումներ, հոլովումներ, մասնիկներ, յօդեր, տառեր, ձայնարկութիւններ, ևլն.). Պառաւարտութեա, մանկական լեզու, կնոջական և շուկայիկ արկուղերէն. Յատուկ անուաններ, մերթ իրենց նշանակութեամբ. Պոլսական կամ Պոլսոյ մէջ ծանօթ կենդանիներ, բուսականներ և հանքային իրեր. Արհեստաւորի բառեր. Բնածայք. Տղայական և տաանին զրօսանք իրենց յատուկ աստղաւածներով. Ժողովրդական բանահիւսութիւն. Հանելուկներ, մանիւններ, երգեր, օրօրներ, վիճակի քառականներ, բանածեւեր. Մողթանք, անէծք, հայհոյանք, Հեղնական, նախատական, կատակաւոր աստղաւածք իրենց պատասխաններով. Բառասպել, յանդաւոր հեղինակներ և ձեռքնաներ ևն., պառաւաշունչի (նախապաշարմանց) յատուկ աստղաւածք:

ՄԱՌԱԳԱՔԱՆԱ



Շինել բառգիրք մը, ուր պատկերուած ըլլար Պոլսահայ գաղութին լեզուն իր ուսմկացած և աղաւաղ զիմայեղումներուն հետ. Հարել ու դասել հոն մի միայն այն բառերը, այն ոճերը և այն բանածեւերը, որոնք կը վիտան հազարաւորներու բերնին մէջ և զորս ժողովուրդը ատրիններէ ի վեր սրգեկրած է գրաբարէն չորթելով. թուրքերէնէն թարգմանելով, զբացի լեզուներէ հորկին բերմամբ փոխ տանելով և կամ, ասանցմէ դուրս, ինքը ինքնին ստեղծելով. չինել բառգիրք մը և մէն մի բառի կամ մէն մի պարբերութեան զետեղումէն անմիջապէս յետոյ անոր աղբերակը զննել, բանալ, վերլուծել, վերջապէս տալ պատշաճ այն մեկնութիւնը, որով կարելի ըլլար հեշտիւ թափանցել անոր ոգիին. անընդհատ գործածումով մաշած ծիւրած հրէշացած բառերը քթուրարկել ու դուրս ցայտեցունել անոնց աղուոր նախատիպը. Ահաւասիկ ա՛ս կերպ գործ մըն էր, որուն ձեռնամուխ եղանք ու զայն հնարաւոր սահմանի մը մէջ լիակատար զուլիս հանելու եռանդով բարբառուն՝ պէտք եղաւ մեղի կրել զրեթէ եօթը տարուան աքնութիւն մը, ամէն իժիբ գեղերիլ հուսա հունա, մութ ու բութ խաւերու մէջ, բանաւոր կրպակներէ ներս կամ կանացի խմբումներու շուրջ, շուկան, ժամը, բաղնիքը, կապելոն, ամէն ո՛ւր որ մերին անուս դատակարգը իր սիրտի զեղումներուն, գատանքին, խոնջէնքին, ուրախ օրերուն ու սուգի գայարումներուն պահուն ուրոյն տառթիւններ սովոր էր կիրարկել. Այսպէս, թուղթի անվերջ պատառիկներ զրպաննիս, մեծկոկ բա-

¹ Արդիականացրել ենք ձեռաւոր մը (կէտադրութիւն, գլխազրերի գործածութիւն, փակագծեր, պարբերութիւններ ևայլն) առանց բովանդակութեանը ձեռք տալու:

ցինք մեր ականջը մամիկներու ինքնատիպ խօսուբանութիւն, անէծքներուն, մաղթանքներուն ու հեղինակի արտայայտութիւններուն. կախուեցանք մօռտաբերաններէ, արկողեան բարբառը, չուկայիկ դարձըւածքներ ու ծածկարանութիւններ չուրթերէ դուրս իրենց թռիչին մէջ կատեցուցինք, նիշեցինք, յիշեցինք և ամբողջը մէկանց խմբած ու կուկած՝ յանձնեցինք ներկայ երկասիրութեանս էջերուն՝ կերպարանելու համար գիրք մը, ուր խտանար մէկ ստուար մասը աշխարհիկ լեզուին:

Աշխարհիկ լեզու կամ, աւելի շիտակը, «աշխարհավարիկ» լեզու. ոչ սակայն այն հագուած-չքուած Աշխարհաբարը, որ աս օրուան օրս կը դանուէր Մամուլի թունդ տփին մէջ, երթալով կոկուելու, երթալով սարկուելու օտարոտի ասութիւններէ և թօթիկու կապանքը Գրաբարի սեղմ լուծին, հապա այն անգիր դպրութիւնը, զորս, չես գիտեր, ինտո՞ր դարբներ-բաներ են ժողովրդեան ծոցածին զաւկըներ ու մանա-

ՊՈԼԻՄԻ ՀԱՅԵՎԱՐԸ

ԲԱՌԳԻՐԸ ՊՈԼՍԱԿԱՆ ՌԱՄԿՈՐԷՆԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՅՑ

ԹԷՌՈՂԻԿ



1899 — 1905

ԴԵՍԿԻՆՅԱՐ

«Պոլիսի Հայելարը», անուանաբեր: Չեաւորում՝ Թէռղիկի:

Լանդ պառուաշունչ հայու կնիկներ, Չըխտալընէն Սամաթիա, Սամաթիայէն Իսկիւտար, Վլանկա, Թօրխարու, Էն. Էն., Բիւզանդական ոստանին ատ հայաշատ արուարձաններուն մէջ, լեզու, զոր յարմար դատեցինք ալ Պոլիսի Հայելարը յորջորջելու Հեռի՝, փարսախներով հեռի արիսթոկրատ լեզուի մը բարձրութենէն, աս ռամկօրէնը սակայն այն

բարբառն է, զոր անվթար պահած ունի հասակդի բնակչութիւնը իր առօրեայ, ջուրի պէս վաղուկ խօսակցութեանը, տեսակցութեանը տանն, փոխն ի փոխը մարդ համագիւլու, լոխդիւլու, առտոնելու, գայրոյթի, քամահրանքի, սիրոյ, տաղաուկի և ծաղու պարագաներուն: Ասոնց մէջ պիտի գտնէք խաւածանին իսկատիպ գրագիտութիւնը և քերականութիւնը, խորհելու, գտակու նորանշան եղանակներ, փոխարեքութիւն, այլարանութիւն սպրդեցնելու սմբըրուկ արուեստ մը. աւելցուցէք առոնց վրայ հայեցի կերտուած անանկ բառեր, բարդութիւններ, ածանցումներ, նաեւ անանկ գունագեղ ոճեր և յատկաբանութիւններ (Idiotismes), որոնց արծաղանգը բառարանի մը էջերը չէ որ եղած են ցարդ, ու կ'ունենաք «Պոլիսի հայեվարը»:

Երծաղելի պիտի ըլլար անշուշտ փորձ փորձել այս տեսակ բառգիրքի մը տաղձներովը կանգնելու տիպար աշխարհարարի մը շէնքը լման. միայն թէ կրնանք համարձակիլ յայտնել, որ անոր ապագայ յորինուածքը բաւական մը բան կարող է փոխ առնել, ճարտարապետութիւնը անթերի ու քիչ մըն ալ, եթէ կ'ուզէք. հարազատ սեպուելու համար: Իրենց գրիչը մինակ ազնուական լեզուի մը կաղամարէն թաթխելու ունակողներ հուզէին պիտի երբեք քիթ փչրել Ռամկօրէնի պաշարին, նկատելով զայն ճշմարիտ աղբիւսք մը նոր Հայերէնի: Այս վարկածը որքա՛ն ստոյգ է, իրաւ որ չեմ գիտեր: Կիտցածս ան է, որ աշխարհի մէջ խոտան համարուած աղբիւսքներ տանն-ատեն թաղստոցը եղած են գանձերու. Մեծ Խաչեալին Դառաթիւնը բաւ և շատ է ներկայացունել իրր տառջին օրինակ...: «Ժամանակն եկած էր, որ հարկին պահանջումը յաղթանակէր ամէն գաղափարաց և յօժարութեանց դէմ, և դարուս սկիզբներէն փոքր ի շատէ զգալի եղաւ ռամկօրէն լեզուին յարգատու և նոյն լեզուաւ գիրքեր շարագրելու կարօտութիւնն»։ ասանկ գաղափար մըն էր ա՛հ, որ կը հրապարակէր ասկէ տարիներ առաջ Մխիթարեան Ուխտին ներհուն գանկերէն մին, ինքը յաւէտ կարմիր գրարարեան մը ըլլալով հանգերձ:

Իբր յառաջարանի նախամուտ վերեւի հակիրճ տեսութիւնը ընելնէս յետոյ անցնինք բոագգիրքիս պարունակութեանը և խօսինք քիչ մըն ալ այն ուղղութեանը, այն ճամբուն վրայօք, ուրկէ տոտիկ-տոտիկ քաղցուցինք, յառաջ տարինք մեր տքնութիւնը:

Ինչպէս կ'երեւի Բովանդակութիւն վերնագիրով սկիզբը գրուած ցուցակէն, բոագգիրքիս մէջ մեծկակ բաժին մը յատկացուցած ենք Բովանդակութեան ճիւղին, բայերու խոնարհմանց անկանոնները և բառերու հոլովմանց անսովորները ուշի-ուշով նշանակելով իրենց դիմաց: Միմիայն ռամկօրէնի յատուկ յետադաս և նախադաս մասնիկները գիրի կարգով զետեղեցինք և ո՛ր պարագաներուն ի՛նչ նշանակելին բացատրեցինք օրինակներով:

Հայերէն Այբուբենին 38 գիրերուն վրայօք զոտ-զոտ խօսեցանք և անոնց խաղցած դերերը մէկիկ մէկիկ ջանացինք պարզել:

Գալով ձայնարկութիւններուն, հարկ եղաւ նոյնիսկ թուարկել զանոնք իմաստի իրենց նուրբ զանազանութեանցը սիրուն: Գաղափար մը տալու համար յառաջ բերենք Ար. 1. Միջարկութիւն ցաւի. Ա՛ մի կ'ընես, ակուպ կը բաշուի: 2. Դժգոհանքի. Ա՛... ա՛հ չեղաւ իշեհ: 3. Զմայլանքի. Ա՛... ի՛նչ աղուռ է:

Ութը մասունք Բանին անջատարար ուսումնասիրութեան առարկայ դարձունելնուս տանն դիտեցինք, որ

ամականը, *կրք կրկնուի, մակրայ կ'ըլլայ, ինչպէս. Անուշ-անուշ* (իշեի). լեղի-լեղի (վսխել):

Գոյականը *կրք կրկնուի, հիացում կը նշանակէ, ինչպէս. Վարդ-վարդ՝ երկխոսն բացուցածն էր:*

Բայր *կրք կրկնուի, չարանակական գործողութեան մը իմաստը կ'առնէ, ինչպէս. ելլալ-եկլալ ու նստիլ: Կ'երթայ-կ'երթայ, նորէն հոն է:*

Մակրայր *կրք կրկնուի, ուժգնութիւն կու տայ, ինչպէս. Շուս-շուս կը բալէ կոր:*

Իսկ գոյականի կամ անվանի քովքովութիւնը կը բաղադրէ ստատիկոսյն վիճակը բառին, պայմանաւ որ առաջինը սեռական ըլլայ ու վերջինը՝ ք գիմարոյ յօդով, *ինչպէս. Մարդերուն մարդը «գերշար-գելի անձ»:* Սեւին սեւը «ամենասեւ» է: Էտուն եւր «ծայր աստիճան կոպիտ»:

Պիտիկին պղտիկը «հիւլէի չափ»:

Անտեղի յագնութիւն մը պիտի դառնար վերասին հոս փոխադրել քերականութեան յատուկ այս դրուագները մի ըստ միով: Միայն թէ մէկ քանի տարրական ծանօթութիւն հուսա ներածել բանաւոր էր անշուշտ բողբոջի մասին նկատուող հանգրուանները մտաշիւղի ընծայելու դիտումով:

Օրինակի աղագու, *ի՞նչ ըսել է հոյեղի բայտով խօսքը, որուն շատ պիտի հանդիպի գիրքս թղթառդ մը: Երայանի է, թէ թուրքերէնէ փոխառիկ բայեր է՛ր աղէկ կան ընթացիկ լեզունուս մէջ, ինչպէս. մնալ «մնալ» իրենք», սպիտակ «սպիլ վիմէ», սեպել «սպնմ», բիւլ «բլմմ», չալի «չալմմ», պարբիլ «պարբմմ», տոնել «տոնմմ» «կշտամբել» ու իմաստով: Այս կակիկ, կլորիկ, համաձայն կողագարները ահա հոյեղի բայտով կոչեցինք և զանց բրինք այն բայերը, որ ընչովին տաճկեմար գրոյմ մը ունէին, *ինչպէս. խուսուրմիւ ըլլալ, (ծինը) խուսուրմիւ ընել, պոլուրմիւ ըլլալ ևն. ևն., անոր համար որ տաճկ վերջը չի պիտի գար. և յետոյ՝ տաճկ համարները գիտէ մօղովուրդը, ինչպէս կոսիլ, վաղուել, աւուրիլ ևն.:**

Բոռի մը սահմանը տուած տաննիս խղճա՛տը ուղեցինք ըլլալ անոր ամենանուրը տառնները նիշել, ընդլայնել, չի մոռնալով նաև օրինակ մը քովիկը դասելու: Իբր նմայ տաննք աչքը. սեռական նաև աչիչ > աչիգ — գրաբար աչալ, *ինչպէս. աչիչիս լուսն ես գուն իմին: Երգն. նաև աչուրներ. — ուրներ կամ — ուրներ մասնիկով յագնակիի կը վերածուին մի միայն այն միավանկ բառերը, որոնք մարմինի վրայ զոյգ անդամի անուն են, ձեռք-ձեռուրներ, աչք-աչուրներ, լոնք-լոնքներ, ձուկ-ձուկուրներ, մուկ-մուկուրներ: Իսկ կոկով բառին յագնակիին կոկվրներ ըլլալուն պատճառը, բառը երկվանկ ըլլալով՝ ձայնաւորներէն միայն սղմամբը միավանկի վերածուիլը և — ուրներ զօրէնքին հօդատակիլը չէ, վտանգի վտեր ու — ուրներ նայն չեն. հապա պատճառը այն է, որ երկվանկներու ամենցումին պահուն երկրորդ ձայնաւորը կը կարծուի, *ինչպէս կալանդ-կալանդուան, տման-ամրներ, կոնակ-կոնրկես, առապ-առպերեն ևն.:* Եթէ մոզ միավանկը մոզուրներ չ'ըլլար, պատճառը այն է, որ անստայգ է թիւով իրեն զոյգ ըլլալու: Իսկ թեւը, որ ըստ այս օրէնքին պարտէր սեւուրներ ըսուիլ, թեւեր յագնակիին կայանք տուած է ներդաշնակութեան օրէնքին գէմ չի մեղանշելու համար. երկուս ՎՎ (վվ) քով-քովի խորթ կը հնչէ ականջին: ԱԶԲ. 1. Ականջիք, տեսողութեան գործարան: 2. Նայուածք, *ինչպէս՝ Սրբոր վրայ աչք մը**

պարսցուր: 3. Ուշագրութիւն, հսկողութիւն: 4. Զարակնութիւն, ինչպէս՝ աշխույ կ'ուսեն կոր մեզի: 5. Նժար (կշիռի): 6. Ծակ, ինչպէս՝ բան, բախտիկ եւ ինչ ալ մը բացուեւ ե: 7. Խոստ (պանիրի, հացի մէջ): 8. Խորշ, դարակ: 9. Կապ անցունելու օղ, օղակ (կօշիկի եւն): Այլ. սամկերէն տել: Իսկ ալ բառով կերտուած սճեր, ինչպէս՝ ալ բանով, ալ համար հազար պէտք է, ալ սունկ, ալ բալ՝ մեղի լաց, ալ իլուսել, ալ փառածին շտի, ալ քե ելած եւն, եւն, 200ի մօտ ստորեւ դասուած են իրենց ուրոյն մեկնողականներով:

Աւելորդ չի սեպեցինք նաեւ անձնիւր բառի տարնիւր կցել-շտրել տնոր հսկանիւններ, ուր ընդունուած նորարանութիւններն ալ աստատօրէն իրենց գոյութեան իրաւունքէն չի զրկուեցան:

Ոճերու շարքին մէջ կան անանկներ ալ, որ բաղդատութեան դրուած են գրարարիններուն հետ. ասով ցուցունել ուզեցինք, թէ աշխարհիկ լեզուի ասացուածքները երբեմն զուտ գրաց լեզուի աղբիւրէն բղխած են. իրենց կազմութեան՝ գրացի լեզունիւ կազմուած դասուելին ջրելու համար: Պատիկ օրինակ մը պիտի բաւէր սրահդ: Գրարար Բեւեռ զբեւեռ բովել «չիլի չիլիի սեփեր», Զիբա ի վեր սունկ «սոսքայ», Խորեակամար «սամ ել ինտէն վաւարը», Աննիկ տունի «ինքզինքիդ կ'ընես, քեցիք ետքարը» եւն:

Այս = հաւատար նշանով պիտի տեսնուին բազմաթիւ բառեր (զուկն, թրք, պրսկ, արբ, յն, անգղ, գղ), որոնք բաղդատութեան դրուած են ստորին կամ մօքուր հայերէններու հետ. բառգիրքիս Ուղղագրական մասը կազմելով: Մեր նպատակն էր գիւրացնել բանասէր ընթերցողին ազգայն աշխատութիւնը, զետեղելով կարգ մը զուտ հայերէններու դիմացը օտար լեզունիւ համեմատելի բառեր, ասանց յաւանկելու. թէ ճարտը բաղդատականներնիս բացարձակ ճշգրութիւններ բլլան: Ապագային մենք թերեւ տեղի խնամելու պատրաստենք. հիմակուանը իրեւ նիւթի պարզ հաւաքում մը կը ներկայացունենք, կամ տեղի չիտակը՝ նախափորձ մը:

Բաւական ստուար քանակով մը մթերուած են դարձիս մէջ տառնիւններն ալ, ասոճայիններէն սկսեալ ինչուան օտարները, անոնք, զոր ժողովուրդը թարգմանարար կամ հայեցի եղանակով վարժութիւն ունէր կիրարկելու: Ասածներուն և հասարակաց ասացուածքներուն կարգին ընթերցողը պիտի պատահի անանկներու ալ, որոնց տեսքէն զուտակ երեւոյթ մը կ'արտացոլայ: Զարմանալի չէ ասիկա, ինչու որ Գաւառարարառի և Պոլսական պատուարարառի խնամութեան կապ մը կա՛յ ու կայ: Ատենօք գաւառներէն հոս գաղթող էրիկմարդեր պոլսերնակ աղջիկներու հետ կարգուելով՝ անոնց՝ իրենց ասոճային լեզուն բանեցուցած են. կիներն ալ իրենց կարգին աղկաղկ վերաբերումով մը վարուելով իրենց համար անսովոր այդ լեզուն հետ՝ գէշ աղէկ իւրացուցած են զայն և ընթացիկ դարձուցած անոր գարծածութիւնը: Ասոր համար է որ զուտ գաւառական խել մը ասութիւններ, ասածներ ու բառեր չափաւոր ասոճանի մը մէջ նայնացած են մերիններուն հետ:

Երկս որպէսզի ձայնագիրի մը գլանին պէս հաւատարիմ ներկայանար, չուզեցինք անյուշ թողուլ մաղթանքի, անէժփի և հայհուշներու անհամար կաղապարներ, կատակաւոր զուրցուածքներ իրենց արձագանգ պատասխաններով. բառախաղեր, հանելուկներ, տունի և ծաղկացի զրօսանքներ իրենց կոչումներով. նարաի ու թուղթի խաղերու ասանձ-

նախատուկ բանաձևեր, «չուկոյի քերականութիւնը», ինչպէս կ'ըսեն, կնիկի ծածկաբանութիւններ. վերջապէս յանգամայն այն զրոյցները, որոնց խորը ծանականքէն զատ ոճ սեպուելու արժանի դրաւագներ ալ կը թագչէին, ինչպէս՝ բէն-է-բէ՝ խլիէ, ինի-մէն-իմ՝ Ասուած իմ հն. Հեգեկոյով ձեգեկոյ նորահնար բացատրութիւննիս աս կարգիններուն համար գործածուեցաւ:

Իսկ ձեգեկոյն, որ հեղնոտ ճակատում մըն է սեէ խօսքի, դարձեալ իրեն ծոցը կը պահէ, չես գիտեր. ի՞նչ դիւթանք մը լեզուական. զոր օրինակ՝ Քուր, պասխն. Բեբի'ս Եեմէն: Պապա (մեկկն. լեզու)՝ պապրուկի'ս: Համէկ՝ շէֆէ ծամէ: Հարս . . . Եստանիք հանէ: Մար՝ մարմի'ս: Պապուրէ Է՝ պասկ զնէն վրան (անէծք) հն.:

Անէծքներուն միմիայն մէկ օրինակ պիտի բուէր զաղափար մը կազմելու համար խուժանին ունեցած տարօրինակէն եզական դրագի-տութեանը վրայօք. Լանկիլ Լանկիլ, պոյլիլ լամ:

Այնուհետեւ երգ, օրօր, մանի և վիճակ բառերուն հանդէպ ուղեցինք զաղափար մը առ ժողովրդական բանահիւսութեան մասին, քառականն. բու, երկաղներու և վերջանուագ հատուածներու ինչ-ինչ մէջքերում-ներով, հաւատով, որ համայնքի մը պատկերային լեզուն բացառա հոծացում մը ունի հառաչներու, տարփանքի տուալումին կամ ճոխ-րիկին մէջ մրտի տանող առագաստի պտուղին մեկանոյշ մենեղներուն մէջ:

Գունագեղ և իսկապէս եզական զուրցումքներ պատուաւորելին մէջ ալ կը վխտան: Ենթադրուած բառով պէտք է հասկնալ լոկ նախապաշարմանց յատուկ ոճերը, որոնցմէ իբր նմոյշ բառգիրքս ունի: Ինչ որ հաւատքի մասն է, հոն բառ ու ձև պիտի գտնէք. սնապաշտութիւնը տառը կարգէն է ահա:

Այս ամէնքէն յետոյ կը մնար խօսիլ զործիս բառամբերին վրայ, այսինքն՝ պոլսական և Պոլիսի մէջ ծանօթ բոլոր կենդանիներուն, միջատներուն, թռչուններուն, սողուններուն, բուսեղէններուն, հանքային իրերուն և անոնց ծառայութիւններուն և մանաւանդ արհեստաւորի սեպական զանազան բառերուն վրայ: Առ այս հարկ եղաւ մեզի գլուխ դարնել փերեզակի, գեղագործի, բազկերակ շօշափողներու, ուսկանի ու կարթի հետ խողացողներու, պօրտայի մարդուն, վաճառքի ու հաշիւի պաշտօնէին, բաճը բրիչը գործածողին, ասեղ ձեծողին, մետաղ ու գոհար բանողին, կարուակէն մինչև թռչնորս, թռչնորսէն մսագործ փոխնի փոխը այցելելով անձնիւրի բերնէն իսկ լսելու իր զրաղումին վերաբերեալ բառերը: Հատորս եթէ խճողուեցաւ այսպէս՝ օտարամուտ բառերով, փոխարէնը գտնէ կրցանք առ անոնց համարմէք հայերէնները. գանուածներէն ու մոռցուածներէն խլելով լոյս աշխարհ ածելով, պակասներն ալ նորաբանութիւններէն կամ գաւառականի պաշարէն ընտրողակի տանելով:

Եւ Բառգիրքս, փորձ կամ նախափորձ, այն յոյսը ունիմ, թէ լման դրանկարն է Պոլիսի Ռամկօրէնին:

Թէ՛ՈՒԻԿ ԼԱՊԺԻՆՃԵԱՆ

ՄԻ ՀԱՏՈՒԱԾ «ՊՈԼԻՍԻ ՀԱՅԵՎԱՐ»-ԻՑ

ԱԿԱՆՋ ԵՒ ԴՐԱՆՈՎ ԿԱԶՄՈՒԱԾ ԴԱՐՁՈՒԱԾՔՆԵՐ՝

Ականջ, *առժկօրէն* անկան. *սեռ*. անկընի, [յոգն.] անկընցեր. *Լսողութեան* գործարան. *լսելիք*, *սենկն*:

Ականջ զնել, *Ունկնդրել*, *մօտիկ ընել*:

Ականջ խառնելիք, *Հիլալ*, *Ականջկրկիտ*:

Ականջ կախել, *Ունկնդրել*, *մօտիկ ընել*, *ինկատ առնուել*, *կարեւորութիւն տալ*. *Ինչպէս*՝ Ականջ մի՛ կախեր զուց անոր:

Ականջ կտրել, *Ուշիւ ունկնդրել*:

Ականջ հոսելի, *տե՛ս* Ականջին հոսելի:

Ականջ ունենալ, *Երաժշտութեան*, *նուագի լեզուէ* հասկնալ:

Ականջ չի զնել, *Ստունդանել*, *չի հնազանդիլ*:

Ականջ չի կախել, «*Մօտիկ ընելը չ'արժեր*» ըսել:

Ականջ պատուել, *Ուժգին ձայն հանելով խուլցունել*:

Ականջս քեզի է, (*բանաձև*) *Ուշագիր կ'ունկնդրեմ քեզի*:

Ականջ տալ, *Ունկնդրել*:

Ականջէն աղջիկ է, (*բանաձև*) *կը նշանակէ, թէ անարկուած աղջիկը կուսութիւնը կորսնցուցած է. այս ասութեամբ ըսել կ'ուզուի, թէ անթակային վրայ միայն այդ մասը մնացած է անեղծ և անվթար*:

Ականջէն բռնածին պէս զուրս ընել *կամ* զեհնէ զեհին զարնել, *Վարժապետի սպառնալիք*, *ևն.*:

Ականջէն բռնել, բերել, տանիլ. *Չերբակալել ըսելու մէկ ձևը*:

Ականջէն ելլալ, *Մտնալ*:

Ականջէն քաշել, (*գրբ.*) *օգել* զսկանջ. *Նշանուողի, որպէսզի խօսեցնալին անունը զօւրցէ*: 2. *Դպրոցականի պատիժ*:

Ականջը անցնիլ, *Տե՛ս* Ականջը երբալ:

Ականջը բանալ, 1. *Խուլ մը բժշկել*. 2. *Ուշի ուշով մօտիկ ընել*:

Ականջը գոցել, *Մօտիկ չ'ընել*, *արհամարհել*:

Ականջը գոցուիլ, *Խլանալ*:

Ականջը զնել, *Լուր մը իմացունել*. *Ինչպէս*՝ Սրուդ տալեր, սկանջն եւ զեր:

Ականջը երբալ, *Իմանալ զաղանիք մը, զաղանի բանի մը վերահասու ըլլալ*: 2. *Աղմուկէ մը լսելիքը տաղտկանալ, յոգնիլ. Ինչպէս*՝ Հերիք պոռաս, սկանջս զնալ:

Ականջը ըլլալ, *ի մօտ ունենալ խրատ մը, պատուէր մը, յանձնարարութիւն մը*:

Ականջը լեցնալ, 1. *Նողկալ՝ միշտ գէշ խօսքեր լսելով*: 2. *Լեզուի մը վարժուիլ. Ինչպէս*՝ Գաղիկար խօսին նե հեռոյ, սկանջոյ կը լեցայ, զուց տլ կը սորվիս:

Ականջը լեցունել, *Համոզել*:

Ականջը խօսիլ, *Բացակայ ողջի մը լաւ յիշատակութեան տաթիւ բանաձև*. *Հո՛ս* ըլլալու եր:

Ականջը խօսիլ, 1. *Դռնչել*: 2. (*Պառաւաշունչ*) *Այլուր նայն վարկենին իր մասին խօսիլ*:

Ականջը ծակ, *Արթուն*:

Ականջը ծակ է, (*տառծ*) *Չիկայ բան մը որ չ'իմացուի*:

՝ *Տե՛ս* ձան. 1: Ականջ բառից կազմուած դարձուածքներէց մի քանիսը տեղաշարժել ենք խիստ այբբենական կարգը պահելու համար: Մ. Մ.

Ականջը ծակել, 1. Աղջնակի մը ականջներուն բլթակները մոխիրով չփել
ու ասեղով ծակել՝ օղի ծակ բանալու համար: 2. Իմացունել
չգգուշանալ, միաքը բանալ դէպի գաղանիք մը, խելամուտ ընել
տալ, արթնցունել:

Ականջը ծակը, ծանրալուր, ուշ լսող, խուլկէկ:

Ականջը կտրե քոյ՝ ետին ձգե, (բանաձե) կը բամբասեն կոր զինքը, չի-
մանար կոր, անտարբէր է իր մասին զուրկուածներուն:

Ականջը հասնիլ, Իմանալ, (գորբ.) լու լինել:

Ականջը մեկուն ընել, Ունկնդրելու հրաւիրել. ինչպէս՝ Ականջդ ինծի
քեկ քի զուրցեմ:

Ականջը մնալ, Յիշել:

Ականջը մնալ, 1. Խրատ մը, դատ մը ըմբռնել: 2. Հաւատալ. ինչպէս՝
Ականջս չի ասուր ասակ խօսքեր:

Ականջը մօտ բերել, Լաւ ունկնդրել:

Ականջը ունենալ, տե՛ս Ականջը ըլլալ:

Ականջը սուր, Արագալուր:

Ականջը վագել, Ականջի հիւանդութիւն մը:

Ականջը ասնիլ, Շատ խօսելով, շշնկոցով ականջը յոգնեցունել, ձանձ-
րոյթ պատճառել:

Ականջը բիրայի տալ, Մտացիր ունկնդրել:

Ականջի աղտ, (գւռ.) Ստուկ:

Ականջի գեռ գալ, Անխորժ հնչել:

Ականջի գուռ, (գւռ.) անկճգուռ. Թմբուկ = գդ. tympan, քունք: Ինչ-
պէս՝ Անկտնիկ գուռը սիրեմ քի ամեն բան շիտակ է իմացեր:

Ականջի ետի կամ ետեւ նետել կամ ձգել, Յետաձգել, ձգձգել, կարեւորու-
թիւն չի տալ:

Ականջի լոբ, Ականջթոռ, բլթակ:

Ականջի ծակ, Թորիծ:

Ականջի վրայ պառկիլ, Խօսքի մը կարեւորութիւն չի տալ, յանձնարա-
րութիւն մը չի կատարել:

Ականջին տնտնկ գալ, Լսել կարծել:

Ականջին պալիլ, Լուր մը թեթեակի լսել:

Ականջին զարնել, Լուրի մը ևն. հետուէն հետու հասու ըլլալ:

Ականջին հասնիլ, Տեղեկանալ:

Ականջին ջուրի ձայն գալ, Պատանիներու՝ արհամարհանօք մտիկ ընելը
ծերերուն յորդորակները:

Ականջին վրդ գալ, Առ ոչինչ գրել, անգոսնել:

Ականջին ասնիլ, Ալիւրէ հրուշակ եփելու տեհն դգալ մը խորիծ ական-
ջին մօտեցունել՝ եփունութիւնը ճշդելու համար: Նաեւ ժամացոյցի
բանիլը, ևն.: Իսկ Ականջին չի ասնիլ՝ ականջ չի կտիւնել, անգոսնել:

Ականջին օլ ըլլալ, Անմոռանալի խրատ տալ. ինչպէս՝ Անկընիկ օլ ըլլայ:

Ականջները բամբակ քիւր ե, (նխակն.) Զիմանար կոր:

Ականջները զոցել, Յիշոց ևն. չիմանալու համար ձե:

Ականջները խծալ, Դոնչել անթութեանէ, տկարութեանէ ևն.:

Ականջները ուտել, Շատ խօսելէ ունկնդիրը ձանձրացունել:

Ականջները տնկել (շան, իշու ևն.), Շուկանջել, ականջները ցցել:

Ականջները բիրիւր ըլլալ, Յարթմի կալ:

Ականջն ի վար խօսիլ, (գոր.) Առ ունկն ճառ փարտալ:

Ականջովը լսել, (գոր.) Ականջալուր լինել: Վստահ ըլլալ լսածին վրայ,
անձամբ տեղեկացած ըլլալ: